

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիմ 10 րուբլ, կես տարվան 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մեջ:

Օտարադարձարարի դիմում են ուղղակի

Խմբագր. Редакция «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուրբ օրերից)

Ցույտարարում ընդունվում է ամեն լեզուով:

Ցույտարարում խմբակների համար պետք է լինի
խմբագրատնի 2 կոպեկ:

“ՄՇԱԿ”

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. հ. Ն.

(ՏԵՍՆԵՐՈՐԴ ՏԵՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոդուկցիայով ԱՄՆՆ ՕՐ (բացի տոն և տոներին հետևող օրերից):

ՊՐՕԳՐԱՄԱՄ. I. ՏԵՐԻՔԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ, II ԱՌԱՋԻՆՈՐԴ ԴՈՂՈՒՄՆԵՐ, III ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ, IV ԱՐԴԱՐՔԻՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ, V ԽԱՆՆ ԼՈՒՐԵՐ, VI ՀԵՈՒՄՈՐԻՆԵՐ, VII ՖԻԼԻՍՏՈՆ և ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, VIII ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԵ, տարեկան 10 րուբլ, կես տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3 ր., երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրություն մեջ հետևյալ հասցեով. Тифлисъ, редакция «Мшакъ»:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Ներքին տեսություն: Տառն և երկ ձև-
գրություն: Նամակ համարում: Նամակ Գան-
ձակից: Նամակ Գործից: Ներքին լուրեր: Ար-
տաքին տեսություն: «Русскій Курьер»
լրագրի թղթակցությունը: Անգլիա: «Մշակ»
հեղինակներ: Ցայտարարություններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՐԻՔԱՆ

ՏԱՄՆ ԵՒ ԵՐԹ ՀԱՅԱՐ ԲՈՒՐՆԻ

«Արարատ» ամսագրի հոկտեմբերի տես-
րակում դարձեալ կարգում ենք մի յոդուած
աշակերտացոյ 17,000 րուբլու մասին: Թէ
ո՞ր է գրել այդ յոդուածը, կամ ի՞նչ ա-
նուն է թաղանթի նրա ստորագրութեան
տակ, մեզ համար մի և նոյն է, բաւական
է, որ նա տպւել է լծմիածնի պաշտօնական
ամսագրի մէջ և մենք կը համարենք նրան
Մայր Աթոռի խօսքը:

«Արարատ» պատասխանելով «Մշակի»
151 համարում տպւած մեր յօդուածին,
«բարեկամաբար» խորհուրդ է տալիս մեզ
ուսումնասիրել հայոց անցեալ և ներկայ
պատմութիւնը, ծանօթանալ լծմիածնի և
նրա գահակալ Հայրապետի իրաւունքների
հետ, և այնուհետեւ միւսանգամ չը ձանձ-
րացնել լծմիածնին, ասելով, թէ ի՞նչ ի-
րաւունքով է պահում նա իր մօտ այդ-
կերտքի սովատանջների 17,000 րուբլին,
կամ ի՞նչու այդ գումարը չէ դորձադրում
նուիրատուների բազմաքանի համեմատ:

Յաւում ենք, որ զանազան տխուր հան-
գամանքներից ստիպւած, մենք հարկադր-
ւած ենք այժմ փոքր ինչ լուր, թէ ի՞նչ
պատմական նշանակութիւն ունի լծմի-
ածին հայոց ազգի վերաբերութեամբ, կամ
մինչև որ սահմանն են հասնում նրա գա-
հակալ Հայրապետի իրաւունքները: Բայց
մի և նոյն ժամանակ չենք կարող համա-
ձայնել «Արարատի» պաշտօնական ազգա-
րարութեան հետ, թէ լծմիածնի գահա-
կալ Հայրապետը հայոց ազգի «հէրն» է,
հայոց ազգի «շնան» է, և ինչպէս
որ կամենայ, այնպէս իրաւունք ունի
ցիւներ:

Վարկելու հասարակութեան գումարների
հետ:

Հայոց պատմութեան որ քունջուպուծա-
լիցն է հանել «Արարատը» այդ ինքնա-
կալ «հէրն» ու «շնանը», մեզ յայտնի
չէ: Մենք այսքանը միայն գիտենք, որ
հայոց ազգը երբեք չէ ունեցել հոգեւոր
բռնապետներ և այժմ նոյնպէս չը պիտի
ունենայ:

Եթէ հայոց եկեղեցին ունի մի գլխաւոր
արժանաւորութիւն, որ իրաւունք է տալիս
նրան կոչւել ազգային ժողովրդա-
կան և եկեղեցի, այդ այն է, որ ժողո-
ւորը ինքն է ներկայացնում եկեղեցին և
ինքն է կառավարում նրան: Հայոց եկեղե-
ցու հոգեւոր ներկայացուցիչները, լինի նա
կաթողիկոս, լինի նա պատրիարք, լինի նա
մի վիճակի առաջնորդ, կամ մի ծուխի քա-
հանայ, բոլորը ժողովրդի բնորոշներն են:
Եւ եթէ նրանք հակառակ են գնացել ժո-
ղովրդի շահերին, բռնաբարել են նրա
ազգային, աւանդական իրաւունքները,
այդպիսի դէպքերում, ժողովուրդը հրաժա-
րեցրել է նրանց իրանց աթոռից և գրել է
նրանց տեղը աւելի լաւերին:

Մեր պատմութիւնը այդ է ցոյց տալիս
մեզ: Մեր պատմութեան մէջ չենք տես-
նում, որ հայոց եկեղեցին ունենար Հռոմի
անսխալական պապեր, Մեքքայի բռնակալ
խալիֆաներ, Երուսաղէմի տատուածընտիր
քահանայապետներ, կամ Տիբեթի աստուծո-
ծացեալ դայալ—լամաներ: Եւ եթէ գտնուել
են այսպիսիները, հայոց եկեղեցին նրանց
միշտ դասել է ճմուռներին, բրբիջներին և
Աւերմանքների հետ:

Բայց մեր պատմութեան ամբողջ ըն-
թացքում երբեք չենք գտնի մի ժամա-
նակ, որ մեր բայձը հոգեւոր իշխանու-
թիւնը այն աստիճան ձգտած լինէր միապե-
տական սկզբունքներին, որպէս այժմ ձգտա-
րիս է, երբեմն եղել են հոգեւոր բռնապետներ,
բայց նրանք աւելի արտակարգ, բացա-
ռական անձնաւորութիւններ էին, քան թէ
մի որոշ արկնցիպի, քան թէ մի ամբողջ
կառավարչական սխեմայի ներկայացու-
ցիւն:

Ի՞նչ ենք տեսնում այժմ: Լծմիածինը
հարկւր հազարներ է տեսնում ժողովրդից
և ժողովրդին հաշիւ չէ տալիս: Լծմիածինը
ինչպէս կամենում է, այնպէս է վարվում ե-
կեղեցական հարկւր հազարների արդիւնք
բերող կառուածների հետ: Լծմիածինը մեր
վանքերի միաբանութիւնները ոչնչացնում է
և վանքերը կապալով է տալիս այս և այն
վարդապետին: Լծմիածինը մեր վիճակների
եպիսկոպոսական առաջնորդութիւնները խա-
փանում է և նրանց տեղը վարդապետ յա-
ջորդներ է նշանակում, որ կարողանայ ա-
ւելի ներգործել: Լծմիածինը ժողովրդի
ընտրած քահանային ժողովրդից խլում է,
և նրան թողնում է առանց քահանայի: Լծ-
միածինը իր ամբողջ կառավարութեան
զինքն տալիս է մի որ և ինչ բախտախնդիր
Մանկունու ձեռքը: Լծմիածինը Արշակունի
գաղթականների անունով 17,000 րուբլի
փող է հաւաքում և փողերը տարիներով
պահում է իր մօտ: Իրար կը լինէր մի
ըստ միջէ յիշել, թէ ինչ է անում լծ-
միածինը, մենք հենց այդ 17,000 րուբլու
վրա կը կանգնենք:

Ժողովուրդը չէ ցանկանում, որ այդ գու-
մարը լծմիածնում մնայ: Գուցէ լծմիածինը
«Մշակի» խօսքը ժողովրդի ձայն չէ համա-
րում: Այդ իր կամքն է: Բայց ի՞նչ կասէ
լծմիածինը աշակերտացոյ հարկւր ուր
տորագրութեամբ հանրադրին, որ մինչև
այսօր պահպանում է մեր խմբագրատան
մէջ: Ի՞նչ կասէ, որ երկու տարի առաջ է. Պոլ-
սի «Արդարաբան»-Արեւելեան» ընկերութեան
ներկայացուցիչներին մէկը անձամբ դիմեց
լծմիածին և պահանջեց նոյն գումարը:
Ի՞նչ կասէ, որ մի երկու ամիս առաջ է. Պոլսի
«Միացեալ ընկերութիւններ» և սու-
վեց յանձնաժողովի նշանաւոր ներկա-
յացուցիչներին մէկը դարձեալ անձամբ դի-
մեց լծմիածին և պահանջեց նոյն գու-
մարը: Վերջապէս ի՞նչ կասէ լծմիածինը,
որ այսօր է. Պոլսի ազգային ժողովի մէջ
հարց է բարձրացել պահանջել լծմիածնից
ոչ միայն աշակերտացոյ 17,000 րուբլին,
այլ լծմիածնի գահակալ Հայրապետի տան
և չորս ամիս դորձուցնութեան հաշիւը:
Այդ բոլորը ժողովրդի ձայնն է:

Իսկ գալով «Արարատի» այն խօսքերին,
թէ վեհ. Հայրապետի տնօրէնութեամբ ա-
շակերտացոյ 17,000 րուբլով արժեթղթեր
են գնված, և նրանց առկառով դպրոցներ
են բացված Արշակունի մէջ, մենք հա-
զիւ թէ կարող ենք հաւատալ այդ խօս-
քերին, քանի որ մեզ յայտնի է, որ ոչ լծ-
միածինը և ոչ էլ վեհ. Հայրապետը ուս-
սաց սահմանից դուրս, թիւրքաց հողի վը-
րա դպրոցներ բաց անելու իրաւունք չու-
նեն: Եւ զրա ապացոյցն այն է, որ ինքը
վեհ. Հայրապետը մի երկու ամիս առաջ
կամեցել էր յանձնել է. Պոլսի «Միացեալ
ընկերութիւններ» ներկայացուցիչներին մե-
կին, որ իրանց անունով Արշակունի կողմ-
նէ:

*) Ամեն անգամ մենք աշակերտացոյ գումարը
17,000 րուբլի նշանակելիս, «Արարատ» ամսա-
գրի մի տառնին խնամքով ուղղում է մեր
սխալը և 16,358 րուբլի է նշանակում: Երեւի,
լծմիածնի արժեթղթերը տոկոս չեն բերում, չը
նայելով որ, այդ գումարը քանի տարի է, որ
տոկոսով է ստացւում:

րում երեք դպրոցներ բաց անեն և կրս-
տանան լծմիածնից իւրաքանչիւր տարի 80
ոսկի նրանց պահպանութեան համար: Եւ
պատասխանել էր թէ 80 ոսկով երեք դպ-
րոցներ կառավարել անկարելի է:

Ուրեմն, Արշակունի կողմերում դպրոց-
ներ դեռ զոյլութիւն չունեն: Իսկ եթէ «Ա-
րարատ» ամսագիրը ինչ-որիսիւսի վանքի
վաղեմի տիրացուանցը լծմիածնի հիմնած
դպրոց է համարում, մենք դրան կը կո-
չենք յանդուգն աշխատակութիւն:

ՆԱՄԱԿ ԵՒ ՄԱՐԻՆՈՒՅ

Նոյեմբերի 15

Երբ սկսեց «Մեղու» լրագրի միջոցով հայ-
դարձականների վրա բարդած բոլոր դրամա-
թիւնների դէմ բողոքել և փաստերով նրանց ջը-
րել, կարծեմ բաւական չէր թէ որ մի ամբողջ
լրագիր պարագէր այդ հարցով միայն: Ամեն մի
հակառակորդ, որ ուսնակիս է արած խցի ա-
զար, օրէնքները, կամենալով խոր վշտացնել իր
եղբոր սիրտը, դիմում է զարհուրեցի միջոցների
նա, չը խնայելով լուրերի աղանդին, հրապա-
րական դրամատում է իր արեւակից եղբայրը
մի այնպիսի գոռուի արտառով, որ ձէ թէ միայն
փոքր ի շատէ խիղճ ունեցող ժողովրդական, այլ
բարեխիղճ մահմադարեան անգամ ըստ իր կրօնի
չի համաձայնի իր բերանը տանել, ուր մնաց
յրապարակեան մէջ շատերին հաղորդել: «Մեղու»
լրագրի 81 համարում կարգում ենք, որ մի քը-
նիկ պոլսեցիներ «Մեղու» պ. խմբագրին իրանց
ուղղած համակի մէջ վկայում են, իր թէ մի
պոլսեցի վրդապետ անուն լուսաւորչական քա-
հանայ Պօրտ ընկերութեան փայլուն մտաւորներն
հրապարակելով, գրում է քահանայական ուխտը,
Ներկայացնել է. Պօլսի է գալիս և սկսում այն-
տեղ լուսաւորչականների մէջ իր քարոզարարու-
թիւնները հետեւալ կերպով: «Ձեր ընդունած
սուրբերն խնայու մարդիկ են և ձեր պաշտած
Աստուածածինը լիքաւ կնիկ մի էր, և այլն և
այլն, նրա ինչը կը յարգէք: Երբ մի բողոքական
քարոզիչ, որին յանձնված է բողոքական հայերի
մեծամասնութիւնից այլ կերպ չը մտածող մի ժո-
ղովուրդ, այդ գաղափարն ունի Տիրամօր մասին,
հետեւեալս միւս բողոքական հայերն էլ պիտի
ունենան նոյն գաղափարը: Չարտուրի դրամա-
տուէրին: Եթէ վրդապետն Մահմեդի դաւանը
քարոզում լինէր, նա ևս չը պիտի յանդուգն ան-
պատուել Տիրամօր մի այդպիսի վատ մականու-
նով, քանով Մահմեդն Գրիգորային մարդաբէ-
րն ընդունում, ուրեմն և տալիս է նրա մօր մար-
դաբէրի մօր պատիւ, ուր մնաց երբ վրդապետն
քարոզել է Գրիգորային տուր սուտարանը, որի
մէջ նա միշտ կարդացել է Տիրամօր վերաբերեալ
հետեւեալս: «Գու. կանանց մէջ օրհնված պիտի լի-
նիս և բոլոր ազգերն երանի պիտի տան քեզ»:
Երբ որ բանն Աստուած տեսնելով սուրբ կոյս
Մարիամի խոնարհութիւնը, հեղութիւնը և սըր-
բութիւնը, բարեհաճեց նրա արգանդն իշխանու-
ն ամբարն առնելու, ապա ինչպէս կարելի է ա-
սել, որ արարածը համարձակվի անպատուել այն
անձը, որին Արարիչը տուել է մի այդպիսի գե-
րազոյն պատիւ: Համարում է բողոքականները
չին պաշտում սրբերին, ծուր չեն գնում նրանց
գերեզմաններին, մատուցներին և պատկերների
ստացնել, այդ պատիւը տալիս են նրանք Աստու-
ծուն միայն, իսկ սրբերը Աստուած չեն, այլ մար-
դիկ են, բայց մի և նոյն ժամանակ սրբերն ար-
ժան պատիւն ևս չեն դնում «նոցանից» Նոյսը
համարում են սրբերին Աստուծոյ սրբելիքներ, ո-
րոնց խօսքերը, եթէ համաձայն էին սուրբ Գրքի
վարդապետութեանը, ընդունում են, ինչպէս Աս-

Մեզ հաղորդում են, թե խոշանց վանքի գլխավորեղմանատան մէջ գերեզմանների վրա քար դնելու համար նշանակված է մի առանձին տուրք որի հաւաքելը կապալով տուած է մի պարունի: Այդ կարդալուծիւնը մինչև այս թէ հալոց կոնսիստորիայի և թէ հաղեր կառու վարութեան կողմից պաշտօնապէս յայտարարվել չը լինիլով, ժողովրդից կեռ յայտնի է, և պատճառով մեծ անկարգութիւններն պատճառ: Փանի օր առաջ մի քանի օտարաքաղկեացի հայեր, պատրաստել էին քար իրանց հա

ընտանիքի գերեզմանի վրա դնելու համար, Այդ խորհրդին պատշաճաւոր հանդէսով նրանք բաղ- մութեամբ տանում են քարը, բայց գերեզմանա- տան դռները նրանց առջև չեն բաց անում, ա- սելով թէ կապալաւուրից հրաման չը կայ: Մինչև կապալաւուրին գտնուում են, ժամեր են անցնում, յետոյ մի անգամից զարնողով է լինում հրաման ստանալու համար: Ինչպէս երևում է, շուտով մեր եկեղեցական բոլոր արարողութիւնները կա- պալով կը արվեն:

«Մշակի» ներկայ համարի հետ տարածում ենք մեր բաժանորդներին ՄՍՍԿՎԱՅԻ Ա. Լ. Շտում- մերի յայտարարութիւնը շօգօլադի մասին:

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐՍԲՈՐԴԻՅԻՑ, որ իշխան Աբամէլիք-Լազարեան մտադիր է Մոսկւայի և Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիները իրանց կալուածներով յանձնել յիշեալ մայրաքաղաքնե- րի տեղական հայ հասարակութիւնների հակողու- թեանը: Թղթակիցը խոստանում է այդ մասին աւելի մանրամասն կերպով գրել:

Մեզից գիւղից մեզ գրում են, որ այնտեղի հայ ժողովուրդը շատ դժգոհ է իր երկու քահա- նաներից, որոնք միմեանց մէջ շատ անվայել կերպով են վարվում, միշտ թշնամաբար են մի- րաբերվում միմեանց դէմ, կուռում, խմեանց հայդուրով ամենամանկայն խօսքերով և այլն:

Մուսացանք յիշել մեր երէկվայ համարում, որ Թիֆլիսի հայ-կաթօլիկ եկեղեցու մէջ նոյնների 21-ին կատարված հանդիսարար պատարագի ժա- մանակ, երբ պատարագիչը ինքն սրբազան Զա- քարեան Աղոյնին հայ-կաթօլիկ հայրակապտան կայ, ներկայ էր և մեր սրբազան Գրիգոր եպիս- կոպոս Աղապիրեան, որին հայ-կաթօլիկ եպիս- կոպոսը մի օր առաջ այցելութիւն էր արել:

Նոյեմբերի 20-ին և 24-ին հայոց թատրոնա- կան ծխական խումբը ներկայացրեց Դեկլարի- չէ (Համբէ) ողբերգութիւնը: Այդ ներկայացում- ների մասին կը խօսենք հետևեալ համարում:

Վերջին ժամանակները ՄՍՍԿՎԱՅԻՄ մտել է հրապարակական դատախազութիւնների մի նոր և օգտաւէտ ձև, այն է կրօնական բովանդա- կութեան դատախազութիւնների եկեղեցիներում: Անդադար տեսնում ենք մայրաքաղաքի լրագիր- ներում այդ տեսակ յայտարարութիւններ: Այս ինչ օր, այս ինչ ժամ, այս ինչ եկեղեցում հրա- պարակական դատախազութիւն քրիստոնէութեան պատմութեան մասին, կատենարանէ այս ինչ քահանայ: Այսպիսով եկեղեցին ստանում է կատարելալ կրթողական նշանակութիւն:

Ամբողջ ռուս մամուլը զբաղված է մի անց- քով, որ պատահել է Ս. Պետերբուրգի գիտու- թիւնների ակադէմիայի մէջ: Նրանք ռուս քի- միկոս Մենդելէեւի չընդունվեցաւ ակադէմիայի անդամ, որովհետև ակադէմիան լցված է գերմա- նացիներով, որոնք թշնամաբար են վերաբերվում դէպի ռուս ռուս գիտականները:

Ակաթօլիք «Русь» լրագիրը չարունակում է արտասանել թափել ռուս ազգի վրա և յայտ- նում է, որ Ռուսաստանի ամենամահաւոր բա- րոյական պահանջը այն է, որ ռուս հասարա- կութիւնը ազատվի եւրօպական քաղաքակրթու- թեան և եւրօպական աշխարհայեցողութեան ստրկութիւնից: «Русский Курьер» լրագիրը նրան պատասխանում է, որ ռուս ժողովրդին հարկաւոր է ապահովութիւն զեղծութիւնների դէմ, հարկաւոր է հայ և անտեսական բարօրութիւն, իսկ գիւղացուին հարստանալու, նրանց կաշառ- ներ անտող պրոստիտուտ կը լինի արեւօք եւրօ- պական հայկացիներ ունեցող, թէ եւրօպական աշխարհայեցողութիւնից ազատված մի մարդ, — դա մի և նոյն է ժողովրդի համար:

Մեզ հաղորդում են հետեւեալը: «Ներկա տարի առաջ, Հաւաքարի մի քանի մասնորներ խօսում էին իրանց մէջ Հաւաքարում կուռ հինգերեւոյ կարպատիւնեան վրա, բայց այդ մասնորները մնացել են մինչև այսօր առանց գործի: Վերջա- պէս, կիթակի, նոյեմբերի 23-ին, երեկոյեան, հա- ւաքարեան պ. Զով. Տեր-Մկրտչեանի տանը մինչև 10—12 անձինք և սկսեցին կատարեալ ձեռ- նամուխ լինել այդ գործին: Այդ ժողովը լարե- ռաբոտարար արդիւնաւոր անցկացաւ՝ որոշելով նոյեմբերի 26-ին աւելի մեծ դիրքով նիստ կա- յացնել և ընդհանուր հիմունքներ և հարցեր որոշել: Մենք շուտով կը խօսենք կուռի կարե- ւորութեան և ժողովների հետևանքի մասին. մի- այն այժմ գտնականում ենք կատարեալ աջողու- թիւն այդ գործին: Յոյս ունենք, որ հաւաքար- ցիք իրանց գործով կը ցոյց տան իրանց ընդու- նակութիւնը հասարակական գործերի մէջ»:

Նոյեմբերի 26-ին, երեկոյեան ժամի 8-ին Թիֆլիսի հասարակական գրադարանի դահլի- ծում լինելու է հինգերորդ հազարամասն ժո- ղովի Թիֆլիսի նախապատրաստական կոմիտէի նիստ: Բողովը կը զբաղվի հետևեալ առարկա- ներով 1. Կոմիտէի նախագահ՝ Ա. Բ. Կոմա- րովը կը հաղորդէ տեղեկութիւններ հնազանդա- կան աշխատութեանց մասին, որ արած են կոմիտէի յանձնարարութեամբ: 2. Մոսկւայի

նախապատրաստական կոմիտէի նախագահ՝ Կոմս Ա. Ս. Ռաբարովը կը յայտնէ հնազանդական ժո- ղովներ հաստատելու նպատակը և նրանց նշա- նակութիւնը հնազանդութեան համար: 3. Կոմի- տէի անդամ՝ Ա. Գ. Ներիցովը կը հաղորդէ հայոց եկեղեցիներին կից կղած գաւթիների և ժամատունների նշանակութեան և բնաւորութեան մասին: 4. Ն. Օ. Տիլոսանին ցոյց կը տա մի քանի իրեր, որ ինքը գտած է Կասպից ծովին կից տեղերում: Նրանք, որոնք հետաքրքրվում են հնազանդութեամբ, հրաւիրվում են այդ նստին:

ՄՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„РУССКИЙ КУРЬЕР“ ԼՐԱԳԻՐ ԹԵՂ- ԹԱՅՈՒՆԻՒՆԸ

Մոսկւայում հրատարակող „Русский Курьер“ լրագրին փարիզից գրված թղթ- թակցութեանց քաղում ենք մի քանի տե- րերը:

Նկարագրելով թէ ինչպէս է ապրում փարիզի Ֆրանսիական ուսանողութիւնը, ինչպէս ուսանողները առաւօտից մինչև երեկոյ անցնում են ժամանակ իրանց սի- բուհներին հետ թէ տանը, թէ կաֆէնե- րում, ինչպէս նրանք յաճախում են հրա- պարակական պարահանդէսները և պատե- րազմներ են անում այն բոլոր երիտասարդ- ների դէմ, որոնք ուսանողներ չեն, թղթ- թակցը ասում է հետևեալը:

Փարիզի ուսանողների մեծ մասը դաւա- ռացի ունեւոր ծնողների որդիներ են, ո- րոնք շատ անգամ 200 մինչև 300 Ֆրանկ ամսական են ստանում: Աւել- լի քիչ ստացողը ծածկում է իր ըն- կերներին, թէ որքան է իր ամսական ե- կամուտը և միշտ վերջին մօղայի համե- մատ է հաղնվում: Ուսանողները այս կամ այն քաղաքական կուսակցութեանը չեն պատկանում իրանց համոզմամբ, այլ մեծ մասամբ պատկանում են այն կուսակցու- թեանը, որին պատկանում են նրանց ծը- նողները: Բայց առհասարակ ոչ քաղաքա- կան կեանքը, ոչ էլ մինչև անգամ գիտու- թիւնը հետաքրքրում է Ֆրանսիացի ու- սանողներին, այլ նրանք մեծ մասամբ կա- նանցով են զբաղված և պահովի կանանց հետ են անցնում իրանց ուսանողութեան ամբողջ ժամանակը: Բայց չը նայելով ու- սանողութեան բարոյական և մտաւոր այդ տեսակ զարգացման ստոր առարձանի, ու- սանողների թիւը այնքան մեծ է, որ եթէ այդ բազմութեանց ամենամեծն թիւն էլ կը դառնան ծանր, խորհող, ուսմանը նուիրված մարդիկ, դա բաւական է որ Ֆրանսիական գիտութիւնը իր հարկաւոր կոնտինդէնտը ստանայ:

Թղթակիցը ասում է որ այժմ փարիզում կան բաւական շատ ռուս ուսանողներ: Նրանց թիւը հասնում է մինչև 60 հոգի և մի 15 հոգի ռուս ուսանողուհի էլ կայ: Ասում են որ փարիզ, մանաւանդ բժշկա- կան ակադէմիա մտնելու նպատակով գա- լիս են Ռուսաստանից մեծ մասամբ բնաւ- կան դպրոցներում աւարտածները, որոնց համար Ռուսաստանում փակած է ծանա- պարհը դէպի համալսարանը: Փարիզի բժշկական բաժինը ընդունելու համար նրանցից չէ պահանջվում լատինական և յունական լեզուները: Թղթակիցը ասում է որ համալսարան ընդունվելու ձևերը շատ հասարակ են և մանրամասնաբար պատ- մում է թէ ինչպէս են ընդունվում ռուս- նողները:

Ռուս կանայք, որոնք ուսանում են փա- րիզում, գրեթէ բացառապէս բժշկականու- թեամբ են պարապում: Նրանցից միայն երկուսը՝ օրիորդներ Լէյ և Բօրանիգէր Ֆի- ղիկական և մաթեմատիկական գիտութիւն-

ներ են ուսանում: Նրանք գիտաւորութիւն ունեն Ռուսաստան վերադառնալ և ուսուց- չութեամբ պարապել: Բժշկական ուսումը աւարտած ռուս կանանցից շատերը վերա- դարձան Ռուսաստան, որտեղ և պարա- պում են պրակտիկայով: Մինք միայն, օրիորդ Գոնչարովա, մնացել է փարիզում, ու այդտեղ գործնական բժշկութեամբ է պարապում: Պրոֆէսորները շատ գոհ են ռուս ուսանողուհիներից և շատ լաւ են վարվում նրանց հետ, բայց նոյնը չէ կարե- լի ասել ուսանողների մասին, որոնք ան- վայել կերպով վերաբերվում են դէպի ու- սանող կանայք, անդադար ծաղրում են նրանց, այնպէս որ կանայք աշխատում են մտնել լատինը պրոֆէսորի ամպիոնը բարձ- րանալուց յետոյ, որպէս զի հանգստութիւն ունենան ուսանողների տղայական ցուցում- ներից: Շատերը ուսանող օրիորդներից ըս- տված են մտնել լատինները իրանց մի ազգականի կամ հօր հետ, որպէս զի պաշտպան ունենան ուսանողների անվայել վարմունքի դէմ:

Թղթակիցը թողնելով համալսարանը, մի քանի նորութիւններ է հաղորդում փարիզի մամուլի և գրականութեան մասին: Ֆէլիքս Պիայի „Commune“ լրագիրը զադարել է և նրա տեղը սկսել է երեւալ „Emancipa- tion“ թերթը, որ Ֆրանսիական սօցիա- լիստների օրգանն է: Նրա ուղղութիւնը ծանր է, գրելու ձևը շատ ժողովրդական է և վերին աստիճանի հասկանալի, նա իր ուղղութեամբ նմանութիւն ունի գերմա- նական սօցիալ—առնակաբեական օրգանների հետ: Ռաբլէ կողմից Բլանկի գիտաւորու- թիւն ունի հրատարակել մի նոր լրագիր հետեւեալ օտարտի վերնագրով „Ni Dieu ni maitre“ (ոչ Աստուած և ոչ տէր): Իրպէս նորութիւն թղթակիցը հաղորդում է որ Էմիլ—Գը—ժիրարդէն լըյա ընծայեց մի նոր գրուածք „Կինը, որպէս մարդու հաւասար“ վերնագրով: Գրանով հեղինակը պատասխանում է Ալեքսանդր Գիւմայի գրուածներին կանանց մասին: Բաժանելով Գիւմայի կարծիքը թէ կանանց պէտք է մարդկանց հետ հաւասար քաղաքական իրաւունքներ տալ, Ժիրարդէն, այնու ամենայնիւ պնդում է որ կնոջ գլխաւոր պաշտօնը հասարակութեան մէջ՝ մօր պաշ- տօնն է. նրա կարծիքով կնոջը պէտք է անպայման կերպով յանձնել երեխաների կրթութիւնը, պէտք է ուրիշ կողմից վերց- նել դժուարացնող ձեւապաշտութիւնները պատկեր կապելու և ամուսնական ապա- հարգանքներ կատարելու ժամանակ:

ԱՆՂԻՒՍ

Լրագիրների մէջ կարդում ենք հետե- լեալ տեղեկութիւնները: Թէպէտ Գլխաւորի արտասանած ճառը լծնդծի լորդ—մերի մօտ չը բացատրեց անգլիական ազգայ քաղա- քականութեան նախագիծը արեւելեան գոր- ծերի վերաբերութեամբ, բայց դրա փոխարէն անգլիական արտաքին գործերի մինիստր լորդ—Գրինվիլի նորբում ասած ճառը լըյա գցեց Գլխաւորին ճառի անհասկանալի կէ- տերի վրա և մեկնեց անգլիական արեւելեան ապագայ քաղաքականութիւնը:

Լորդ Գրինվիլի ամենից առաջ յայտնեց, որ չէ կարելի յունական հարցը անվճի- թողնել: Նա ոչինչ չը ծածկեց այն բոլոր անցքերից, որոնք պատահեցան Գլխաւորի հարցը ընկելու ժամանակ, որը վերջապէս աջող վախճան ունեցաւ: Անգլիան առա- ջարկել էր պետութիւններին զբաւել Զմիւռնիա և լորդ Գրինվիլի յայտնեց այդ ա- ռաջարկութեան չաճողվելու պատճառները: Պետութիւններից ամենից առաջ յետ առա- իր խոստումները Աւստրո—Ռուսարիան և նրա օրինակին հետեւեցին Գերմանիա և Ֆրանսիա, իսկ Ռուսաստանը և իտալիան

չը փոխեցին իրանց նախկին վճիռները: Այդպիսով գործը սկսվելուն պէս անաջո- ղութեան հանդիպեց և այսուհետեւ Անգ- լիայի արեւելեան քաղաքականութիւնը բո- լորովին ազատ կը լինի, միայն կառավա- րութիւնը կաշխատի պահպանել եւրօպա- կան համաձայնութիւնը: Արտաքին գոր- ծերի մինիստրը Անգլիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները ա մե ն ա բ ա ռ ե- կ ա մ ա կ ա ն անուանեց և խօսելով այն պետութիւնների մասին, որոնք ազնուաբար աշխատում էին պահպանել եւրօպական համաձայնութիւնը, չը յիշեց Ֆրանսիային: Սրանից կարելի է եզրակացնել, որ Գլխա- տանի մինիստրութիւնը մտադիր չէ հե- ռու մնալ արեւելեան գործերից, ինչպէս շատերը վերջին ժամանակներում հաւա- տացնում էին: Անգլիան մտադիր չէ հրա- ժարվել իր սկսած գործից: Անգլիական կա- ռավարութեան կարծիքով յունական ինքիքը անկարելի է յետաձգել և նա պարտաւոր չէ անտարբեր մնալ միայն այն պատճառով, որ եւրօպական պետութիւններից մի քա- նիսը չեն բաժանում այդ հայեացքները: Անգլիան ազատ է Արեւելքի մէջ այնպէս գործել, ինչպէս ինքը յարմար կը գտնի: Նա կաշխատի պահպանել եւրօպական հա- մաձայնութիւնը, բայց հարկաւոր դէպ- քում կարող է գործել և առանց այդ հա- մաձայնութեան, մանաւանդ որ պետութիւն- ներից մի քանիսը կատարելապէս համա- կրում են նրա գործունէութեան եղանա- կին:

Պէտք է ենթադրել, որ անգլիական կա- ռավարութեան այս նախադիմքը համակրելի չէ Գերմանիայի համար, որովհետեւ նա ա- ռաջ խորհուրդ տուց յունական կառավա- րութեանը զգուշանալ պատերազմական գործողութիւններից, իսկ այժմ, չը բաւա- կանանալով այդ խորհուրդներով, աշխատում է համոզել Ֆրանսիային և Աւստրո—Ռուսա- րիային, որ անհրաժեշտ է հակա-յունական ցոյցեր անել: Հազիւ թէ այդ աշխատանք- ները աջող վախճան ունենան, որովհետեւ Գերմանաստանը ի նկատի ունենալով Անգլիայի պաշտպանութիւնը, կարող է չը վախճալ հակա-յունական այդ ցոյցերից և պատե- րազմական գործողութիւններ սկսել Թիւրքի- ցիայի դէմ: Փանի որ Ֆրանսիան ակամային մասնակցում էր հակա-թիւրքական ծովային ցոյցին, որ ընդհանուր եւրօպական բնաւո- րութիւն ունէր, հազիւ թէ համաձայնվի մասնակցել հակա-յունական մասնաւոր ցոյ- ցերին: Իսկ ինչ կը վերաբերի Աւստրո—Ռու- գարիային, նրա շահերը թոյլ չեն տալ, որ արեւելեան գործերի վերաբերութեամբ բա- ցարձակ ընդգրկմանայ Անգլիային և Ռու- սաստանին:

Այս բոլորից երևում է, որ լորդ Գրին- վիլի ճառը չափազանց նշանաւոր է, որով- հետեւ նա պարզ յայտնում է, որ Անգլիայի քաղաքականութիւնը չէ փոխվել և որ եւ- րօպական պետութիւնների համաձայնու- թեան խանգարվելը չի արգելի Գլխաւորին ստանալ Թիւրքիայից այն բոլոր զինամիջ- րոնք պահանջվում են թիւրքաց կառավա- րութեանը յանձնված պետութիւնների հա- մաձայն գործութիւններով:

ՄՐՏԵՐԻՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Թէ ՀԻՍՆ, 24 նոյեմբերի: Մի քանի հազար պարսիկ ուխտաւորներ, վերադառնալով Մէկկայից, ստիպվեցան մնալ Բաղդադի մէջ, որովհետեւ ճանապարհը անվտանգ չէր քիւրդերի յարձակումներից: Ֆիրմանշահից դէպի արեւմուտք քիւրդերը յարձակվեցան ուխտաւորների վրա: Կարշիքի մօտ ուխ- տաւորների վերջին երեք քարվաններ մեծ զնաւ կրեցին, աւելի քան 500 հոգի ուխ- տաւորներից սպանվեցան և վիրաւորվեցան: ԿԱՍԵԼԻՆՈՎՈՎ, 24 նոյեմբերի: Միացած նաւատորմը երէկ հեռացաւ: Աւստրիական նաւերը ուղեկցում էին նաւատորմին մի քանի մղոն տարածութեան վրա:

Թմբադիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

